

ծեց, մինչեւ որ 1609ին Յովհ. Խուլ Պատրիարքութիւնը ձեռք բերաւ: Գր. Վ. 1609ին հետն առնելով Մովսէս սրբակեաց Վ.ը, որուն ի Կ. Պոլիս գաւազան տուած էր ինք, եւ որ յետոյ Էջմիածնի կաթողիկոս եղաւ (օծեալ 13 Յուլիս 1629: Յ. Յ. Թօփճեանի Յուլ. ձեռգր. Դադեան Խ. Վ. ի, Վրդ. 1898, էջ 98 կը նշանակուի 1624), նաեւց Եգիպտոս եւ Սինա լեռը ուխտ կատարելէն ետեւ՝ Տիգրանակերտ գնաց, եպիսկոպոսաց եւ մեծամեծաց ժողով կազմեց, Երուսաղեմայ համար գումար հաւաքեց եւ տաւ Երուսաղէմ, երբ տեղւոյն Պատրիարքն էր Արգարն Դաւիթ (1610, որ յիշատակարանի մը համեմատ՝ արդէն 1583ին Պատրիարք էր, տես Հայաստանում՝ էջ 599—603), պարտքերը վճարեց, եկեղեցական սպասները պարտքէ ազատեց, Գրիգոր Բ. Պարոն-Տէրը Պատրիարք դրաւ նոյն տարին: (Գաւազանագիրք սխալմամբ 1631ին Պատրիարք կը դնեն Գր. Պարոնտէրը:) Յամին 1611 արքունական հրամանաւ զԳրիգոր Կեսարացի դարձեալ Պոլիս տարին Պատրիարք նստուցին. «Եւ նստեալ յօլով ժամանակս եւ ձանձրացեալ ի նոցանէ՝ հրաժարեալ եկն ի Կեսարիա», կը գրէ Յակոբ Երէց, որ ճիշդ չէ. վասն զի ժամանակակից եւ գործակից Գր. Վ. Դաւանադուոյ համեմատ՝ Կեսարացին 1612ին գահընկէց եղաւ եւ իր տեղը ղրկուեցաւ: 1627ին Կամենից գնաց, ուրկէ վերադարձաւ Կեսարիա: Յետոյ 1633ին արքունի հրամանով մեծաւ հանգիսիւ Պոլիս Պատրիարք նստաւ եւ 1636ին